5. Հայկ համաստեղութիւնը Աշնան արշալոյսէն առաջ կը ծագի. այսպէս Սեպտեմբերին առաւօտեան $1^1/_2$ ին հորիզոնէն վեր հազիւ բարձրացած է ամբողջովին. իսկ Նոյեմբերին կէսօրին ժամը իննին յետ միջօրէի ծագած է արդէն. որով աշնան գեղեցիկ գիշերները՝ Նոյեմբերի համար հասկընալու է, իսկ ձմեռուան գիշերները միջօրէականի մօտերը կը գտնուի։

6. Բոյլք՝ ըստ Խորենացւոյ աշխարհագրութեան «պղտտեայք» է նշանաւոր Pléiades խումբը և ըստ Նախնեաց Բազմաստեղն.

7. Հիւսք՝ է ուրիշ խումբ մը աստեղաց՝ Ցուլին գլխու վրայ աւելի նուազ լուսով քան Բոյլքերը։

8. Այս պարբերութեանը մէջ կուզէ հասկցնել հեղինակը թէ աստեղաց զանգուածոց վրայ գիտութիւնը շատ յառաջացում ըրած չէ, նոյնչափ գիտէ մեր դպրոցէն ելլող տղայ մը ինչ որ հին ժամանակի տղաքը գիտէին։ Եւ կամ շատերու անտարբերութիւնը հանդէպ այս գեղեցիկ ուսման։

9. Հոս փոփոխական բառը է՝ Ցարդգողին ունեցած լուսոյն նմանութիւնը։ Մինչդեռ Անանիա Շիրակացի, կը գրէ (տես Հին հաւատք Հայոց Աւիշանի էջ 128 ծնթ. 2) «Ոմանք կարթ ծիրանագոյն ասացին....։ Այլ ոչ է այդ ամենայն, այլ բաղկեալ հուր է, և մանր աստեղաց ցոլացումն լուսոյ»։

10. Հեղինակը իր գիրքը 12 գլուխներու բաժնած է, և հետևեալներն են Ա. Մեծ առեղծուածը (թարգմանած գլուխնիս). Բ. Այցելութիւն դէպի Արև. Գ. Ճանապարհորդութիւն ներքին մոլորակաց՝ ։ Փայլածու և Արուսեակ, Դ. Երկիր, Ե. Լուսնթեան երկրի մէջ (լուսին). Զ. Հրատ մոլորակը, Է. Հսկայ մոլորակ մը՝ Լուսնթագ. Ը. Սքանչելիք արևային աշխարհի՝ Երեակ. Թ. Արևային դրութեան վերջին սահմանները՝ Ուրանոս և Պոսիդոն. Ժ. Գիսաւորք. ԺԱ. Թռիչ աստեղք և երկնաքարինք ԺԲ. Ո՞ւր ենք։ Այս 12 գլուխներու մէջ ամբողջ տիեզերագիտութիւնը կը բացատրէ գեղեցիկ կերպով իբր թէ վիպասանութիւն մ'է որ կը գրէ։

11. 1887 ին Պարիսի աստեղագիտական համաժողովին մէջ որոշեցին բոլոր երկնքի լուսանկարը առնուլ Աշխարհիս զանազան դիտարաններէն, ի սկզբան 18 էին հիմա 22ի բարձրացան, և իւրաքանչիւր դիտարանին սահմանուած է որոշեալ թուով իրենց երկնքին լուսանկարը առնուլ, որով բոլոր երկինքը գրեթէ 42000 ընդկալուչ ապակիներու մէջ պիտի ամփոփուի, ամէնքը նոյն չափով պիտի տպուի նոյն թուղթի վրայ Պարիսի մէջ։ Միայն մինչև 12-15 կարգի աստեղաց համար է ընդհանուր աստեղահամարը, որուն մէջ պիտի ունենանք տպուած 100 միլիոն աստղներ։ Այս հսկայ գործս պիտի աւարտի 1925ին հաւանօրէն և պիտի ըլլայ երկնքի պատկեր քսաներորդ դարու, և աւանդ մը ապագայ սերունդին որպէս զի կարենայ բաղդատել իր ժամանակի երկնքին հետ գտնելու համար աստեղաց շարժումները և իրենց ուղղութիւնը։

12. Բայց դիտակ մը գտնեայ 30 կամ 40 անգամ մեծցնող ըլլալու է որպէս զի Լուսնթագի սկաւառակը կարենայ նշմարել։

13. Աթոռ՝ բառը հեղինակը Կասիոպէի տեղ դրած է։

14. Թուլման Ձին՝ Պեգասոսի տեղ տրուած է. տես Հին հաւատք Հայոց էջ 142։

Հ. ԽՈՐԷՆ ՍԻՆԱՆ

## ՀԵՏՆՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՆԿՐՕՆՍ

Ով որ մակերևութաբար կը նայի քրիստոնէական կրօնքի վրայ, կարելի է որ առաջին տեսութեամբ անհաւատալի դատէ. բայց երբ լրջութեամբ քննութեան առնու, պիտի ստիպուի խոր համոզմունքով կրկնել Լաբրիւյէրի հետեւեալ խօսքերն, որ ըսելէն առաջ ինքը ծրծաղեր է. «Եթէ իմ կրօնքն մոլար ըլլար, կը խոստովանիմ ըսելու. Ահա գեղեցկապէս լարուած թակարթ մը, որքան որ կարելի է երևակայել, և թէ անկարելի պիտի ըլլար որ և իցէ փախուստ մը տալ մէջն չիյնկնալու համար»։ (Նկարագիրք. գլ. 16)։

## ԿՐՕՆՔԻ ՕԳՈՒՏԸ

Կայ քրիստոնէական կրօնքի մէջ մէկ սքանչելի ճանաչումն մարդկային սրտի։ Արգիլելու համար որ անձնասիրութիւնը չապականէ զանիկայ, կրօնքն անոր հիանալի նպատակ մը կը ներկայացնէ այս աշխարհէքէս դուրս։ Մարդ քաջալերուած այդ նպատակին հասնելու յուսով, անշահասիրութեան ետևէ կ'ըլլայ, հետզհետէ բարձրանալով դէպ ի անձնանուիրութիւն։ Վերցուր կրօնքը, կը տիրէ անձնասիրութիւնն և միայն իր շահու ետևէն կըլլայ։

© National Library of Armenia